Սայաթ Նովա

Գելն ու չոբանը

Գելն ու չոբանը մեկմեկու ռաստ էկան.
Գելն ասավ.«Բարով տեհա, չոբան ախպեր»:
Չոբանն ասավ. «Յիս քու բարովն ի՞նչ կոնիմ,
Վո՛ւնց քու խերը գա զի մ, վո՛ւնց շառը, ա՛նդե:

Գելրն ասավ. «Մուլափ կու տամ, վուր մրթնի,
Ուսուլով ման գու քամ, բինեդ կու գրթնիմ.
Քու շրներու հաչոցեմեն չիմ խրրթնի,
Առուտեհան խերն ու շառը շանց կու տամ»:

Չոբանն ասավ.«Հենց գիդիս՝ դուրթ քո՞ւն ու՛նիմ,
Մե աճկրս-անգաճրս քու կրոնումն ունիմ.
Ամեն դոչի գլխին մե-մեկ շուն ունիմ,
Առատեհան քիզ թամաշան շանց կու տամ»:

Գելրն ասավ. «Վուր ամբը գա ծրմակին,
Ակռեքրս կու գրցիմ դոչի դրմակին,
Կեսը կու խիխտիմ, կեսն էլ իմ քամակին՝
Մե-մեկ, մե-մեկ սարի ծերին շանց կու տամ»:

Չոբանն ասավ. «Գիդիս անդեր մա՞լ ունիմ,
ճրտիդ համա էրկրթե կրրկալ ունիմ.
Թե վուր ճանգրս նրնգար, յիս իղբալ ունիմ,

Կոմբլիս տակին կընձկընձալը շանց կու տամ»:

Սայաթ Նովեն ասավ՝ յիս կարմիր կով իմ,
Կովկիթըս կոտռել իմ՝ հարսից խըռով իմ,
Գիլի հիդ բան չունիմ, չոբնին կու գովիմ,
Մե գամ էլա մածնի համը շանց կու տամ: